ԱԿԱՆԱՏԵՍ
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մասին

ապրիլի 1-մայիսի 5, 2026 թ.

ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մասին
(դիտարկման ժամանակահատվածը՝ ապրիլի 1 - մայիսի 5, 2026թ.)

«Ականատես» դիտորդական առաքելությունը ՀՀ Ազգային ժողովի 2026թ. հունիսի 7-ին կայանալիք ընտրություններին ընդառաջ իրականացնում է ընտրական գործընթացների դիտարկում՝ նախատեսելով վերահսկել ինչպես քվեարկության օրվա, այնպես էլ՝ ընտրություններին նախորդող, այդ թվում՝ քարոզչության ժամանակահատվածը և հետընտրական գործընթացները: Առաքելությունը սկսել է աշխատանքները ընտրությունների օրվա նշանակման պահից:

Սույն տեղեկանքը ներկայացնում է դիտարկման արդյունքները մինչև 2026թ. մայիսի 5-ն ընկած ժամանակահատվածը՝ նախքան նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկը:

Դիտարկման մեթոդաբանություն

«Ականատեսը» կիրառում է համապարփակ և բազմաաղբյուր մեթոդաբանություն, որն իրականացնում է ինչպես գրասենյակային, այնպես էլ դաշտային հետազոտություններ՝ հավաքագրելով քանակական և որակական տվյալներ՝ առցանց բաց աղբյուրների, դաշտային անմիջական դիտարկումների, պաշտոնական հարցումների, կիսակառուցված հարցազրույցների և հանդիպումների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ) և սոցիալական մեդիայի ուսումնասիրությունների միջոցով: Ի լրումն, ընտրախախտումների վերաբերյալ քաղաքացիների ահազանգերն (այդ թվում՝ անանուն) արձանագրելու համար գործարկվել է iditord.org հարթակը:

Ընտրություններին նախորդող ժամանակահատվածում դիտարկման շրջանակը ներառում է ընդհանուր քաղաքական իրավիճակը, սոցիալական ցանցերով ձևավորվող տեղեկատվական միջավայրը, իրավական շրջանակը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ) աշխատանքները, ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ընտրական ցուցակները, նրանց գրասենյակների գործունեությունը, քարոզարշավի ֆինանսավորումը, վարչական ռեսուրսի օգտագործումը, երրորդ անձանց կողմից իրականացվող քարոզչությունը, իրավասու պետական մարմինների կողմից իրավախախտումներին տրվող արձագանքը:

Տվյալների մի մասը հավաքագրվել է գրասենյակային ուսումնասիրությունների միջոցով՝ հիմք ընդունելով պաշտոնական աղբյուրների հրապարակային տվյալները, այդ թվում՝ ԿԸՀ և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովներ, ՀՀ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների կայքերը և այլն:

Դաշտային դիտարկումների համար ներգրավվել և վերապատրաստվել է 61 երկարաժամկետ դիտորդ, որոնք ապրիլի 1-ից սկսել են ուսումնասիրել գործընթացները Հայաստանի Հանրապետության 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ) սպասարկման տարածքներում: Երկարաժամկետ դիտորդները հանդիպումներ են ունեցել ընտրական գործընթացի հիմնական դերակատարների հետ, ներառյալ՝ ԸԸՀ-ների, քաղաքական ուժերի ներկայացուցիչների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, լրատվամիջոցների և քաղաքացիների հետ: Ընտրական վարչարարության դիտարկման շրջանակներում նրանց կողմից կատարվել է 120 այց ԸԸՀ-ներ, դիտարկվել է տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական ու լիցենզավորման 22 դասընթաց: Դիտորդներն իրականացրել են 277 այց կուսակցությունների ու դաշինքների տարածքային գրասենյակներ և մասնակցել 73 տարբեր նախընտրական միջոցառումների, այդ թվում՝ հանրահավաքների, երթերի ու բակային հանդիպումների: Հանրային տրամադրությունների և ՏԻՄ մարմինների գործունեության ուսումնասիրության նպատակով տեղի է ունեցել 140 հանդիպում տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ և 1,312 հարցազրույց համայնքների բնակիչների հետ՝ 1,468 քաղաքացու մասնակցությամբ: Բացի այդ, գործընթացի համապարփակ պատկերն ապահովելու համար իրականացվել է 18 հանդիպում այլ պետական մարմինների և կազմակերպությունների հետ, այդ թվում՝ ՁԼՄ-ների, ինչպես նաև տեղական և միջազգային դիտորդական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Վերհանված խնդիրների և փաստերի հավաստիությունն ապահովելու նպատակով կիրառվել է տվյալների ստուգում մի քանի անկախ աղբյուրների միջոցով:

Դիտարկման ընթացքում արձանագրված խախտումների վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, առաքելության իրավաբանական թիմի կողմից պատրաստվել և ներկայացվել են համապատասխան հաղորդումներ իրավասու իրավապահ մարմիններին՝ ընտրական գործընթացների օրինականության ապահովման նպատակով:

<u>Դիտարկման արդյունքներ</u>

Ընտրական հանձնաժողովներ

Կենտրոնական ընտրական հանձնաժողով

2026թ. փետրվարի 9-ից մայիսի 5-ն ընկած ժամանակահատվածում առցանց եղանակով դիտարկվել են ԿԸՀ բոլոր 16 նիստերը (տեսաձայնագրությունները): Թեև համապատասխան օրակարգերը և ԿԸՀ որոշումները հասանելի են ԿԸՀ կայքում, այնուամենայնիվ, դրանք տեղադրվում են PDF ձևաչափով և մեքենայական ընթեռնելի չեն:

ԿԸՀ նիստերում քննարկվել են օրակարգերում ընդգրկված (այդ թվում՝ նիստով լրացված) 73 հարց: Այս ժամանակահատվածում ԿԸՀ-ի կողմից ընդունվել է թվով 99 որոշում և կազմվել է 3 արձանագրություն՝ 2-ը ԱԺ պատգամավորի մանդատ տրամադրելու և 1-ը՝ Երևանի ավագանու անդամի մանդատ տրամադրելու մասին: Կայացված 99 որոշումներից 97-ը վերաբերել են 2026 թ. ԱԺ ընտրությունների կազմակերպման գործընթացներին, այդ թվում երկու հարցով կայացվել են օրենսդրական դրույթների պաշտոնական պարզաբանման վերաբերյալ որոշումներ, իսկ 2 որոշում վերաբերել է պատգամավորի թեկնածուի գրանցումը ուժը կորցրած ճանաչելուն: Քննարկված 73 օրակարգային հարցերից 71-ը վերաբերել են 2026թ. ԱԺ ընտրությունների կազմակերպման գործընթացներին: ԿԸՀ որոշումներից հատկանշական են նորմատիվային բնույթի որոշումները, որոնցով փոփոխվել են ընտրական գործընթացի առանձին ընթացակարգերի վերաբերյալ գործող իրավակարգավորումները: Մասնավորապես, ընդունվել են դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին առաջադրվող նոր օրենսդրական պահանջներին համապատասխան՝ դիտորդների հավատարմագրման ընթացակարգը, ԸԸՀ-ների նախագահի, նրա տեղակալի և քարտուղարի հաստիքը թափուր մնալու դեպքում նոր ընտրության կարգը, ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանների ձևերը և լրացնելու կարգը, տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրական փաստաթղթերն ու պարագաները փաթեթավորելու և ԸԸՀ ներկայացնելու կարգը փոփոխող որոշումներ: ԿԸՀ-ի 2026 թ. Մարտի 11-ի թիվ 29-Ն որոշմամբ սահմանվել է կուսակցությունների ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնվելու կարգը, համաձայն որի՝ ամփոփման նիստին միաժամանակ կարող է ներկա գտնվել ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) մեկ թեկնածու:

Հետաքրքրություն է ներկայացնում ԿԸՀ-ի կողմից 2026 թ. մարտի 11-ի որոշումը, մասնավորապես՝ Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ և 6.1-րդ մասերի դրույթների պաշտոնական պարզաբանման մասով: Այն, ըստ էության, հանգում է հետևյալին. ընտրություններին մասնակցող կուսակցությունների, թեկնածուների գրանցումն իրականացնելուց հետո գնահատականի կարող է արժանանալ կազմակերպությունների այն գործունեությունը, որն իրականացվել է ընտրությունների նշանակման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, միայն այն դեպքում, եթե ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումների, թեկնածուների անունների հետ ասոցացվող ճանաչված անվանմամբ կազմակերպության ղեկավար մարմնի անդամներն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների հետ, կամ որոնց հիմնադիրը (հիմնադիրները) կամ ղեկավարը ընտրություններում առաջադրվել է որպես թեկնածու:

ԿԸՀ-ն մայիսի 3-ին բաշխվել է 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տարասնսպորի կանգառներում տեղակայված վահանակներում քարոզչական պաստառներ փակցնելու իրավունքը ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքերի միջև: Վահանակների բաշխմանը մասնակցել են ընտրություններին մասնակցող 19 կուսակցություններից և դաշինքներից 15-ը:

Նիստերի թափանցիկություն

ԿԸՀ նիստերի դիտարկումը ցույց է տալիս, որ ԿԸՀ օրակարգային հարցերի վերաբերյալ որոշումները, որպես կանոն, կայացվում են միաձայն և հարցի քննարկումը հանձնաժողովի անդամների կողմից սահմանափակվում է որոշման նախագծերի ընթերցմամբ: Այս պայմաններում հատկանշական է ԿԸՀ նախագահի արձանագրումն առ այն, որ հանձնաժողովը հիմնականում քննարկումներն իրականացնում է «կադրից դուրս» և հանձնաժողովի անդամները նիստին գալիս են արդեն կոնսենսուսով: Նշված պնդումն արվել է 2026թ. ապրիլի 14-ի նիստի ընթացքում, երբ օրակարգում դրված կոնկրետ հարցի քննարկման հանգամանքը բացատրվել է մինչև նիստը զբաղվածության պատճառով հարցը քննարկելու հնարավորության բացակայությամբ:

Հարկ է արձանագրել, որ ԿԸՀ նիստերի տեսաձայնագրումը և հրապարակումը միտված են հանձնաժողովի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանը, ուստի ԿԸՀ օրակարգային հարցերի քննարկումները չպետք է կրեն ձևական բնույթ, իսկ նիստերը չպետք է վերածվեն զուտ հանձնաժողովի անդամների քվեարկության արդյունքների հրապարակման ձևաչափի: Օրակարգային հարցերի բովանդակային քննարկումը պետք է իրականացվի հենց ԿԸՀ-ի կողմից հրավիրված և հրապարակվող նիստերի շրջանակներում:

Նաև պետք է նշել, որ թեև ԿԸՀ կայքում հրապարակված է, սակայն հասանելի չէ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ծախսերի նախահաշիվը սահմանելու մասին 2026թ. փետրվարի 24-ի 23-Ա որոշումը, մինչդեռ 2021թ. ԱԺ արտահերթ ընտրություններին առնչվող համանման փաստաթուղթը հրապարակված և հասանելի է ԿԸՀ կայքում:

Կուսակցությունների գրանցում

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026թ. ապրիլի 30-ի և մայիսի 3-ի նիստերն առավելապես վերաբերել են ընտրություններին մասնակցելու նպատակով կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությանը և գրանցմանը:

ԿԸՀ-ի կողմից կայացված 8 որոշում վերաբերել է կուսակցությունների ընտրական ցուցակները լրացնելու համար 48 ժամ տրամադրելուն, 19-ը վերաբերել են կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները գրանցելուն: Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները գրանցելու հարցերը քննարկելու շրջանակում կայացվել է թվով 23 որոշում ցուցակներում ընդգրկված առանձին պատգամավորների թեկնածուների գրանցումը մերժելու վերաբերյալ: Նշված որոշումները պայմանավորված են եղել ներկայացված փաստաթղթերը լրացնելու համար ԿԸՀ կողմից տրամադրած ժամկետում թերությունները չշտկելու հանգամանքով:

Դիտորդական կազմակերպությունների գրանցում

ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն, ի թիվս այլ պահանջների, ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն ՀՀ-ում գրանցված այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարում ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր:

Ընտրությունները դիտարկելու համար ԿԸՀ-ն հավատարմագրել է 13 տեղական կազմակերպություն, որոնցից՝ 3-ը համատեղ դիտորդական առաքելություններ են: Համատեղ դիտորդական առաքելություններից մեկի՝ «Ազատ քվե» դիտորդական առաքելության համատեղ դիմումը մերժվել է ԿԸՀ 2026թ. ապրիլի 14-ի թիվ 40-Ա որոշմամբ՝ «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական հասարակական կազմակերպության մասով: Մերժման հիմքում դրվել է ԿԸՀ կողմից ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջը՝ սահմանափակ մեկնաբանմամբ, քանի որ «ՄԵՆՔ» հասարակական կազմակերպության կանոնադրական նպատակները բառացիորեն չեն ներառում «ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության» եզրերը: «Ազատ քվե» միասնական անվան ներքո հանդես եկող դիտորդական կազմակերպությունները, «Ականատես» դիտորդական առաքելության իրավաբանական աջակցությամբ, բողոքարկել են ԿԸՀ որոշումը ՀՀ Վարչական դատարան: Վերջինս 2026թ.-ի ապրիլի 27-ի վճռով պարտավորեցրել է ԿԸՀ-ին բավարարել «Ազատ քվե» դիտորդական առաքելություն միասնական անվան ներքո հանդես եկող կազմակերպությունների համատեղ դիմումը: Վարչական դատարանի վճռի հիմքում դրվել է այն պատճառաբանությունը, ըստ որի Ընտրական օրենսգիրքը ենթադրում է կազմակերպության կանոնադրական նպատակների բովանդակային (ոչ թե ձևական) գնահատում, իսկ իրավակիրառ մարմինը պարտավոր է ուսումնասիրել կազմակերպության կանոնադրական նպատակները և պարզել դրանց բովանդակությունը՝ անկախ կիրառված տերմինաբանությունից: Վճռով արձանագրվել է, որ «ՄԵՆՔ» ՀԿ-ի կանոնադրական նպատակները իրենց բովանդակությամբ և նպատակային ուղղվածությամբ ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ

2026 թվականի ապրիլի 1-ից մինչև մայիսի 5-ն իրականացվել է ԸԸՀ-ների նիստերի օրակարգերի դիտարկում, որոնք հրապարակվում են ԿԸՀ համացանցային կայքում՝ www.elections.am:

Դիտարկման արդյունքներով արձանագրվել է, որ բոլոր 38 ԸԸՀ-ները գումարել են ինչպես հերթական, այնպես էլ արտահերթ նիստեր՝ «Ընտրական տեղամասերի ցանկը հաստատելու և հերթական համարները սահմանելու մասին» օրակարգով, որոնց արդյունքում ընդունվել են համապատասխան որոշումներ: Նշված օրակարգով 13 ԸԸՀ-ների նիստ հրավիրվել է 2026թ. ապրիլի 22-ին, 24 ԸԸՀ-ների նիստ՝ ապրիլի 23-ին և 1 ԸԸՀ-ի նիստ՝ ապրիլի 27-ին: Ընտրական տեղամասերի ցանկը հաստատվել և տեղամասերի հերթական համարները սահմանվել են Ընտրական օրենսգրքով նախատեսված ժամանակահատվածում: Այնուհետև, ԸԸՀ-ների կողմից մի շարք դեպքերում կայացվել են որոշումներ

համապատասխան ցանկերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ հիմնականում ընտրական տեղամասերի հասցեների ճշգրտման նպատակով, իսկ առանձին դեպքերում փոփոխվել են որոշ տեղամասերի հասցեները: 2026թ. մայիսի 3-ին թիվ 25 ԸԸՀ կողմից գումարվել է արտահերթ նիստ՝ «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրություն» օրակարգով: Նույն օրը կայացվել է N 2-Ա որոշումը, որով ընտրվել է թիվ 25 ԸԸՀ նախագահի տեղակալ:

Հաշվետու ժամանակահատվածում դիտորդների կողմից իրականացվել է 120 այց ԸԸՀ-ներ՝ դիտարկելու հերթական և արտահերթ նիստերը և ծանոթանալու ընտրությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքին: ԸԸՀ աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում հիմնականում ընթացել են բնականոն հունով: Դիտարկումները ցույց են տվել, որ հանձնաժողովների կին անդամները ակտիվորեն ներգրավված են եղել որոշումների կայացման գործընթացներում: ԸԸՀ-ների համագործակցությունը դիտորդների հետ մեծ մասամբ գնահատվել է բաց և կառուցողական, առանց խոչընդոտների:

Այդուհանդերձ, արձանագրվել է մոտ տասը դրվագ (մասնավորապես՝ թիվ 11,12,17,18, 26 ԸԸՀ-ների դեպքում), երբ դիտորդների համար ծայրահեղ բարդ է եղել կապ հաստատել հանձնաժողովների ներկայացուցիչների հետ, քանի որ հեռախոսահամարները չեն պատասխանել: Եղել է նաև երեք դեպք (26, 11, 13 ԸԸՀ-ներում), երբ ԸԸՀ նախագահները դիտորդներին հորդորել են տեղեկատվություն ստանալու նպատակով ներկայացնել պաշտոնական գրավոր հարցում:

Արձանագրվել են դեպքեր, երբ ԸԸՀ հանձնաժողովներն ապահովված չեն եղել արդյունավետ աշխատանքի համար բավարար շենքային, տեխնիկական և աշխատանքային պայմաններով կամ բախվել են այլ խոչընդոտների: Որոշ հանձնաժողովներում որպես աշխատանքային խոչընդոտ նշվել են ընտրատարածքների և տեղամասերի վերակազմակերպման հետ կապված անճշտությունները: Մի շարք դեպքերում խնդիրներ են առաջացել շենքային անբարենպաստ պայմանների պատճառով. օրինակ՝ առանձնացված մուտքերի բացակայությունը հաճախ հանգեցրել է հանձնաժողովների և նույն շենքում տեղակայված ուսումնական հաստատությունների բնականոն գործընթացների խոչընդոտմանը: Առանձին վայրերում արձանագրվել են նաև տեխնիկական ու ենթակառուցվածքային բնույթի խնդիրներ, այդ թվում՝ ինտերնետային կապի պարբերական խափանումներ, ինչպես նաև՝ հանձնաժողովների նստավայրերի ընթացիկ վերանորոգման և ոչ լիարժեք կահավորման դեպքեր: Բացի շենքային և տեխնիկական անհարմարություններից, առանձնակի մտահոգիչ են հանձնաժողովների ֆիզիկապես անհասանելի և անմատչելի լինելու խնդիրները: Արձանագրվել են դեպքեր, երբ ԸԸՀ նստավայրերը տեղակայված են եղել շենքերի երկրորդ հարկերում կամ մուտքերը ապահովված չեն եղել թեքահարթակներով, ինչն ուղղակիորեն խոչընդոտում է տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց անարգել մուտքն ու լիարժեք մասնակցությունն ընտրական գործընթացներին:

Հանձնաժողովների կազմերում ներառված չեն անձինք, որոնք օրենքի համաձայն իրավունք չունեն լինել ընտրական հանձնաժողովի անդամ: Սակայն շարունակում է ուշագրավ և մտահոգիչ մնալ այն փաստը, որ որոշ հանձնաժողովներում ներգրավված են հանրային պաշտոններ զբաղեցնող անձինք (օրինակ՝ մարզպետի խորհրդական, օգնական, վարչական շրջանի ղեկավարի տեղակալ), ինչպես նաև հանրային ծառայության այնպիսի

պաշտոնատար անձինք (օրինակ՝ համայնքի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի ղեկավար, կրթության բաժնի պետ, տեսչական մարմինների պաշտոնատար անձինք), որոնց պաշտոնեական դիրքը կարող է ստեղծել ընտրողների վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցության հնարավորություն կամ առնվազն նման ազդեցության վերաբերյալ հանրային ընկալում: Նման ներգրավվածությունը, նույնիսկ առանց ուղղակի միջամտության փաստի առկայության, կարող է ազդել ընտրական հանձնաժողովների անկախության և անաչառության վերաբերյալ հանրային ընկալման, դրանով իսկ՝ նաև ընտրական գործընթացների նկատմամբ վստահության վրա:

Բացի այդ, ընտրական հանձնաժողովներում ներառված են հանրակրթական և մասնագիտական կրթական հաստատությունների ղեկավարներ: Այս պաշտոններում անձինք նշանակվում են գործադիր մարմնի՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից, մարզպետարանները ևս ունեն որոշակի վերահսկողական և համակարգման գործառույթներ: Նման հանգամանքները կարող են կասկածի տակ դնել այդ անձանց անաչառ մասնակցությունը ընտրական հանձնաժողովներում կամ առնվազն ազդել դրա վերաբերյալ հանրային ընկալման վրա:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներ

Հաշվետու ժամանակահատվածում դիտորդական առաքելության կողմից դիտարկվել են Տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) անդամների որակավորման և մասնագիտական վերապատրաստման 22 դասընթաց հանրապետության տարբեր մարզերում, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել է 890 ՏԸՀ անդամ (կամ անդամության թեկնածու):

Դասընթացների կազմակերպվածությունը և նյութի մատուցման որակը դիտորդների կողմից հիմնականում գնահատվել են լավ և բարձր (1-5 բալանոց սանդղակում գերակշռել են 4 և 5 գնահատականները): Դիտորդներն արձանագրել են մի շարք դասընթացավարների բարձր պրոֆեսիոնալիզմը, ինտերակտիվ մեթոդների կիրառումն ու ընտրական բարդ իրավակարգավորումների մատչելի պարզաբանումը:

Այդուհանդերձ, դրական պատկերին զուգահեռ, դիտարկումների ընթացքում վեր են հանվել մի շարք խնդիրներ:

- *Կազմակերպչական և տեխնիկական բացթողումներ.* ԿԸՀ պաշտոնական կայքում դասընթացների վայրի և ժամի մասին տեղեկատվությունը երբեմն հրապարակվել է զգալի ուշացումով, օրինակ՝ բուն դասընթացի օրը, ինչը դժվարացրել է դիտորդների աշխատանքի պլանավորումը: Արձանագրվել են նաև տեխնիկական խնդիրներ, օրինակ՝ Սյունիքում հոսանքազրկման պատճառով դասընթացը տևել է նախատեսվածից զգալիորեն կարճ:

- *Հաճախելիության և կարգապահության խնդիրներ.* մասնակիցներից 273-ը լիարժեք չեն մասնակցել դասընթացին:

- *Քննական կարգի խախտումներ և արտագրություն.* Մի շարք մարզերում (Գեղարքունիք, Սյունիք, Կոտայք) թեստավորման փուլում արձանագրվել են հեռախոսներից կամ միմյանցից արտագրելու դեպքեր: Որոշ լսարաններում դասընթացավարները ստուգարքից առաջ չեն մաքրել գրատախտակին գրված հուշումները, ինչը հնարավորություն է տվել մասնակիցներին օգտվել դրանցից: Աբովյան քաղաքում քննական կարգը խախտելու պատճառով 3 մասնակից հեռացվել է լսարանից և գնահատվել 0 միավոր:

- *Նոր էլեկտրոնային համակարգի թերություններ.* Գյումրիում անցկացված հանդիպումների ժամանակ ՏԸՀ անդամները բարձրաձայնել են ընտրական նոր էլեկտրոնային համակարգի գործնական թերությունների մասին: Նշվել է, որ համակարգը բավարար ճկուն չէ, առկա են տվյալների ճշգրտության խնդիրներ, իսկ գործընթացների մի մասը ստիպված շարունակում են իրականացնել ձեռագիր և թղթային տարբերակով, ինչը մեծացնում է սխալների հավանականությունը:

- *Դասընթացներին դիտորդի ներկայության սահմանափակում.* Ալավերդիում անցկացված դասընթացներից մեկի ժամանակ դասընթացավարը, խորհրդակցելով իրավաբանի հետ, դասընթացի կեսից արգելել է դիտորդին լուսանկարել մասնակիցների ցուցակը և պահանջել է լքել տարածքը՝ պնդելով, որ դիտորդն իրավունք չունի այնտեղ գտնվելու: Նմանատիպ խոչընդոտման դեպք արձանագրվել է նաև Սպիտակում, որտեղ դիտորդներին ասվել է, որ դիտորդներն իրավունք չունեն ներկա լինելու այդ գործընթացին: Հարկ է նշել, որ սովորաբար դիտորդներին թույլատրվում է անխոչընդոտ հետևել դասընթացներին, հաշվի առնելով, որ, որպես սուբյեկտ, դիտորդական առաքելության իրավունքը վերապահված է հենց հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին, որոնք էլ այդ առաքելությունն իրականացնում են իրենց կողմից հավատարմագրված դիտորդների միջոցով և կազմակերպություններն էլ ապահովում են վերջիններիս ներկայությունը դասընթացներին: Ավելին, ԿԸՀ-ն ունի դասընթացավարների գնահատման գործընթացներում դիտորդական առաքելությունների ներկայացուցիչներին անմիջականորեն ներգրավելու ձևավորված դրական նախադեպ:

  Դասընթացներին դիտորդների ներկայության հնարավոր արգելքները կարող են խաթարել ընտրական մարմինների և քաղաքացիական հասարակության միջև կայացած գործընկերային պրակտիկան: Նման, թեկուզև եզակի բնույթ ունեցող գործելակերպը հետագայում բացառելու նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն հստակեցնել դասընթացներին նաև դիտորդների ներկայության հնարավորությունը:

Կուսակցությունների ընտրական ցուցակներ

Ազգային ժողովի հերթական ընտրություններին մասնակցելու հայտ է ներկայացրել 19 քաղաքական ուժ, որից 17-ը՝ կուսակցություն, 2-ը՝ դաշինք: Քաղաքական ուժերը ընտրություններին հանդես են գալու վիճակահանության միջոցով որոշված համարների ներքո:

Ընտրություններին մասնակցող երկու դաշինքներից «Ուժեղ Հայաստան»-ը ներառում է «Ուժեղ Հայաստան», «Նոր դարաշրջան» և «Միավորված հայեր» կուսակցությունները, իսկ «Հայաստան»-ը՝ «Հայ յեղափոխական դաշնակցություն» և «Առաջ» աջակենտրոն կուսակցությունները: Այսինքն, 2026 թվականի Ազգային ժողովի ընտրապայքարում պաշտոնապես ներգրավված է 22 կուսակցություն:

Բոլոր քաղաքական ուժերի՝ ԿԸՀ ներկայացրած ցուցակներում ներառված թեկնածուների ընդհանուր թիվը 2,128 էր, և ստորև ներկայացվող վերլուծությունների հիմքում ընկած են այդ տվյալները: Ընտրական ցուցակների վերլուծությունը կատարվել է ամբողջական կերպով, այսինքն՝ հաշվարկում ներառվել են նաև կուսակցությունների ցուցակների երկրորդը մասի՝ ազգային փոքրամասնությունների թեկնածուների տվյալները, թեև օրենքի պահանջները սեռերի ներկայացվածության և կուսակցական պատկանելության մասով վերաբերելի չեն այս խմբերի համար: Բացի այդ հաշվի չեն առնված թեկնածուների չգրանցելու հանգամանքները և ինքնաբացարկները:

Մի շարք կուսակցությունների թեկնածուների գրանցումը մերժվել է ներկայացված փաստաթղթերը լրացնելու համար ԿԸՀ կողմից տրամադրած ժամկետում թերությունները չշտկելու պատճառով: Այսպես, օրինակ, ԿԸՀ-ն մերժել է գրանցել «Դեմոկրատիա օրենք կարգապահություն» և կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Վարդան Ղուկասյանին և «Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության առաջին համար Տիգրան Ուրիխանյանին՝ հիմնավորմամբ, որ նրանք չեն ներկայացրել փաստաթուղթ, որ վերջին 4 տարում միայն ՀՀ քաղաքացի են հանդիսացել և Հայաստանում են բնակվել:

ԿԸՀ ներկայացված ցուցակներում ամենամեծ թվով՝ 293 (առավելագույնը կարող է լինել 300) թեկնածու ներառված է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակում, իսկ ամենաքիչը, նվազագույն թույլատրելի թվով 80 թեկնածու, «Միասնության թևեր» և «Հանուն հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության ցուցակներում: Ընդ որում, վերջինիս թեկնածուներից մեկի գրանցումը մերժվել է, և ներկա դրությամբ ցուցակը 79 է: Սա չի բավարարում անհրաժեշտ նվազագույնի պահանջը, սակայն ՀՀ օրենսդրությամբ նաև առկա չէ տվյալ խնդրի լուծմանն առնչվող կարգավորում:

Սեռերի ներկայացվածություն

ՀՀ ընտրական օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի՝ կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակում առաջին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակում (1-3, 1-6, և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը:



ԱԺ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի կազմած ընտրական ցուցակների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր քաղաքական ուժերը բավարարել են օրենքի պահանջը և մի սեռի ներկայացվածությունը չի գերազանցում 70 տոկոսը: Այդուհանդերձ, ակնհայտ է քաղաքական ուժերի զուտ ֆորմալիստական մոտեցումը այս հարցին: Նախ, մասնակից ուժերի մեծամասնության ընտրական ցուցակների եռյակներում (1-3, 4-6 և այլն) կանայք համարյա միշտ 3-րդ տեղում են: Բացառություն են Ռեֆորմիստների, «Ազգային ժողովրդավարական բևեռ» և «Հանրապետություն» կուսակցությունները, որոնց դեպքում առաջին տասնյակում ընդգրկված է 4 կին թեկնածու:

Կարևոր է ընդգծել, որ որևէ քաղաքական ուժ չունի 1-ին համարի կին թեկնածու, թեև «Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցությունը ցուցակների հաստատումից հետո հայտարարել է, որ իր վարչապետի թեկնածուն ցուցակի երրորդ համար Նինա Կարապետյանցն է: Որպես երկրորդ թեկնածու՝ կին ներգրավված է միայն «Հանրապետություն» կուսակցության ցուցակում:

Սեռերի ներկայացվածության առումով ամենաբալանսավորվածը «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության ցուցակն է, որտեղ կանայք կազմում են ցուցակի 48.8 %-ը (83-ից՝ 40-ը): Ամենից քիչ համամասնությամբ՝ 33.3%-ով (99-ից՝ 33-ը) կանայք ներառված են «Հայ ազգային կոնգրես» կուսակցության ցուցակում:

Տարիքային կազմ

ՀՀ ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր կարող են ընտրվել 25 տարին լրացած անձինք:



ԱԺ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ցուցակներում ներկայացված են 24-ից (Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցություն և «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցություն) մինչև 88 տարեկան («Լուսավոր Հայաստան» կուսակցություն) անձինք: Միջին արժեքով ամենաերիտասարդ նախընտրական ցուցակը «Բոլորին դեմ եմ» կուսակցությանն է՝ 37 տարեկան, այնուհետ «Միասնության թևեր» կուսակցությանը՝ 38 տարեկան, իսկ ամենաավագ ուժը Հայ ազգային կոնգրեսինը է՝ որտեղ միջին արժեքը 60 տարեկանն է:

Զբաղվածություն

ՀՀ ընտրական օրենսգրքի 83-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ընտրություններին մասնակից քաղաքական ուժերն իրենց նախընտրական ցուցակները գրանցելու համար տվյալներ են տրամադրում ընդգրկված թեկնածուների աշխատավայրի և պաշտոնի մասին:

ԱԺ ընտրություններին մասնակից քաղաքական ուժերի մեջ ամենից «զբաղվածը» համամասնությամբ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակն է՝ շուրջ 96.6%, որտեղ թեկնածուների զգալի մասը հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք են: Նրան հաջորդում է «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը 79.8% ցուցանիշով: Ամենից քիչ «զբաղված» ցուցակը Դեմոկրատիա օրենք կարգապահություն կուսակցությանն է, որտեղ չի աշխատում 73 թեկնածու (78.4%-ը):

Քարոզարշավ

Ընտրական օրենսգրքի համաձայն նախընտրական քարոզչությունը մեկնարկում է 2026 թ. մայիսի 8-ին, սակայն օրենքը չի սահմանափակում ընտրություններին նախորդող ժամանակահատվածում քարոզչության իրականացման հնարավորությունը:

ԱԺ ընտրությունների մասնակից քաղաքական ուժերի մի մասը սկսել է փաստացի նախընտրական քարոզչությունը քվեարկության օրվա նշանակումից ամիսներ առաջ: Տարբեր եղանակներով տարածվել են քաղաքական ուժերի գործունեությունը և/կամ կարգախոսները գովազդող բազմաթիվ քարոզչանյութեր, կազմակերպվել են միջոցառումներ: Հատկապես ինտենսիվ ու նկատելի են եղել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, «Ուժեղ Հայաստան» դաշինքի, «Հայաստան» դաշինքի և

«Միասնության թևեր» կուսակցության նյութերը և միջոցառումները, ինչպես նաև դրանց ասոցացվող միավորումների գործողությունները, ինչպես օրինակ՝ «Մեր ձևով» շարժման պարագայում, որը նախորդել էր «Ուժեղ Հայաստան» կուսակցության գրանցման և նույնանուն դաշինքի ձևավորմանը և որի անվան տակ շարունակել են հանդես գալ դրա հիմնական դերակատարները:

Նախքան պաշտոնական քարոզչության ժամանակահատվածը քաղաքական ուժերի կողմից իրականացվող նախընտրական քարոզարշավում կիրառված միջոցների տեսակները և նյութերը, ըստ դիտորդական առաքելության կողմից դիտարկված դեպքերի, ներկայացվում են ստորև.

Կուսակցություն	Բուկլետներ	Մինչև 5 քմ պաստառ	5 քմ-ից ավել պաստառ	ԼԵԴ և այլ գովազդ	Սոց. մեդիա գովազդ	Հանր. միջոցառումներ	Մեքենա/ավտոբուս	Այլ
1. Ռեֆորմիստների կուսակցություն								
2. «Բոլորին դեմ եմ» կուսակցություն	X	X			X	X	X	X
3. «Ուժեղ Հայաստան» դաշինք	X	X	X	X	X	X	X	
4. Հայաստանի շնորհապետական կուսակցություն			X			X		
5. «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցություն կուսակցություն					X	X		
6. «Միասնության թևեր» կուսակցություն	X	X			X	X	X	
7. «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն		X	X		X	X		
8. «Ազգային ժողովրդավարական բևեռ» կուսակցություն								
9. ««Քոչարի» ազգային վերածնունդ և ազգի զարթոնք» կուսակցություն		X						
10. «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն						X		
11.«Հանրապետություն» կուսակցություն	X	X	X	X	X	X		
12. Քրիստոնեա- ժողովրդավարական կուսակցություն								
13. «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցություն								
14. «Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն	X				X	X		
15.«Դեմոկրատիա օրենք կարգապահություն» կուսակցություն								
16.«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	X	X	X	X	X	X	X	X
17.«Հայաստան» դաշինք	X	X	X		X	X		
18. «Հանուն հանրապետության» կուսակցություն								
19. «Լուսավոր Հայաստան» կուսակցություն				X		X		

Պետք է նշել, որ համապատասխան օրենսդրական կարգավորումների բացակայության պայմաններում նախքան պաշտոնական քարոզչության ժամանակահատվածը տարածվող նյութերի և միջոցառումների հետ կապված ծախսերը դուրս են մնում տվյալ ժամանակահատվածի համար սահմանված հաշվետվողականության մեխանիզմներից և, փաստորեն, նաև պետության ու հանրության վերահսկողությունից: Քարոզչանյութերի

ծավալների և ծախսվող գումարների վերաբերյալ հանրամատչելի տեղեկության բացակայությունը անհնարին է դարձնում դրանց՝ կուսակցությունների կողմից հետագայում ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների հետ համադրումը:

Ընտրախախտումներ

Ընտրություններին նախորդող ժամանակահատվածում արձանագրվել են խախտումներ տարբեր դերակատարների կողմից:

Ընտրակաշառք և խոստումներ, բարեգործության արգելքի խախտումներ

ՀՀ օրենսդրությամբ քրեական հանցագործություն է համարվում ընտրակաշառք (այդ թվում խոստում) տալը, ինչպես նաև ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև Ազգային ժողով ընտրվելու մասին որոշումը թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամի կամ լիազորված անձի, վստահված անձի կողմից անձամբ կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթուղթ, ապրանք (բացի կուսակցության անվանումը կամ խորհրդանիշները կամ թեկնածուի անունը, ազգանունը կամ պատկերը բովանդակող և 3,000 ՀՀ դրամը չգերազանցող արժեքով քարոզչական տպագիր և այլ նյութի կամ առարկայի) տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը) կամ բարեգործության հետ միաժամանակ նախընտրական քարոզչություն իրականացնելը:
«Ականատեսը» տեղեկություններ և ահազանգեր է ստացել մի շարք այդպիսի խախտումների վերաբերյալ:

- 2026թ. ապրիլին Բագրատաշենի մաքսատան ղեկավարության կողմից իրականացվել են ոչ պաշտոնական հանդիպումներ Տավուշի և Լոռու մարզերի սահմանակից բնակավայրերի վարչական ղեկավարների, ինչպես նաև գործարարների հետ: Հանդիպումներն անցկացվել են ինչպես մաքսատան տարածքում, այնպես էլ մասնավոր օբյեկտներում՝ ուղեկցվելով հյուրասիրություններով: Ըստ ստացված տեղեկությունների՝ մասնակիցներին տրվել են խոստումներ առ այն, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և վարչապետի վերընտրվելն ապահովելու պարագայում, նրանց նկատմամբ կցուցաբերվի արտոնյալ՝ բարենպաստ վերաբերմունք:

- 2026թ. ապրիլի 6-ի և 7-ին Կապան քաղաքում «Գազպրոմ Արմենիա» ընկերության աշխատակիցը՝ իր գործունեության բերումով սպասարկելով Մինաս Պապյան և Հունան Ավետիսյան փողոցները, շրջայցեր է կատարել բնակարաններով և իրականացրել քարոզչություն՝ բաժանելով «Ուժեղ Հայաստան» կուսակցության նախընտրական բուկլետները: Միաժամանակ, նշված անձի կողմից բնակիչներին տրվել են դրամական, աշխատանքի տեղավորման և գույքային աջակցության խոստումներ՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության օգտին քվեարկելու դիմաց: Թիրախավորվել են հատկապես սոցիալապես խոցելի խմբերը՝ տարեցները և ուսանողները:

- Ապրիլի 21-ին, ժամը 21:20-ի սահմաններում, Կապան քաղաքում ենթադրաբար ալկոհոլի ազդեցության տակ գտնվող անձը, ներկայանալով որպես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Կապանի գրասենյակի ղեկավարի տեղակալ, այցելել է քաղաքացիների բնակարաններ՝ առաջարկելով լուծել նրանց սոցիալական խնդիրները: Քաղաքացու հրաժարվելուն հակառակ՝ նա իր ձեռքով կազմել է բնակարանային աջակցություն ստանալու կեղծ դիմում՝ ուղղված ՀՀ վարչապետին, և ինքն էլ ստորագրել այն: Անձի մոտ առկա են եղել մի քանի շենքերի բնակիչների անվանական ցուցակներ, որոնք, ըստ նրա, պետք է փոխանցվեին գրասենյակի ղեկավարին: Անձը նաև նշել է, որ տվյալ ուշ ժամին ցուցակագրում անել իրեն պարտադրել է վերադասը: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակից հայտնել են, որ տվյալ անձը կապ չունի կուսակցության և գրասենյակի հետ:

«Ականատես» դիտորդական առաքելությունը բոլոր վերը նշված առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող դեպքերի առթիվ հաղորդումներ է ներկայացրել իրավապահ մարմիններին:

Արտերկրի ընտրողներին նյութապես շահագրգռում

Նախընտրական տրամադրություններն ու իրավիճակն ուսումնասիրելու նպատակով «Ականատես»-ի դիտորդներն իրականացրել են անանուն հարցազրույցներ քաղաքացիների հետ: Բազմաթիվ հարցվողներ Հայաստանի տարբեր մարզերում և Երևանում հաստատել են, որ իրենց համայնքում կամ անմիջական շրջապատում ճանաչում են անձանց, որոնք պատրաստվում են ժամանել արտերկրից հատուկ ընտրություններին մասնակցելու նպատակով: Արձանագրվել է 57 դեպք, երբ հարցվողները հատուկ նշել են Ռուսաստանում գտնվող անձանց ժամանման կազմակերպման և համակարգման հանգամանքը: Ընդ որում, նրանցից բոլորը նշել են, որ Ռուսաստանում բնակվող ՀՀ քաղաքացիներին ուղղորդում են քվեարկել «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի օգտին: Քաղաքացիների ներկայացրած տեղեկությունները եղել են մոտավորապես հետևյալ բնույթի.

- *«Բարեկամս ապրում է ՌԴ-ում, նրան առաջարկել են իր համար տոմս գնել, որպեսզի գա և մասնակցի ընտրություններին: Սկզբում առաջարկել են 100,000 ռուբլի, սակայն քանի որ ցանկացողները շատ են եղել, հետո ասել են, որ միայն ավիատոմսը կգնեն»*:

- *«Ունեի բարեկամներ, որոնք սկզբում պետք է գային ընտրության, իրենց խոստացել էին կազմակերպել Հայաստան այցելությունը, բայց քանի որ ովքեր իրենց բերելու էին, ասել էին՝ ում պետք է ընտրեն (Սամվել Կարապետյանին), իրենք չեն ցանկացել այդ ուժին ընտրել, այդ պատճառով հրաժարվել են»*:

- *«Ռուսաստանից մարդիկ են գալու, ում գալ-գնալու գումարը Սամվել Կարապետյանն է հոգալու»*:

- *«Մարդ կա՝ իրոք ուզում ա գա, մարդ կա՝ կանչում են»*:

- *«Անձամբ իմ բարեկամները չեն, բայց հարևանուհուս բարեկամները Ռուսաստանի Բառնաուլ քաղաքից գալու են ընտանիքով հունիսին ընտրության համար, իրենց բերելու են:»*

- *«Իմ բարեկամները զանգեցին ասեցին, որ Սոչիից ու Մոսկվայի տարածքից հունիսին գալու են Հայաստան՝ քվեարկեն ու գնան: Դե գալը, բնականաբար կազմակերպելու են: Ասեցին, որ կոնկրետ չեն ասի, թե ինչքան գումար են տալու իրենց: Ես էլ ասեցի, որ գիտե՞ք չէ, որ կարաք գաք, բայց ուրիշ մարդու ընտրեք՝ քվեարկեք նրան ում ուզում եք: »*

«Ականատես»-ի ստացած տեղեկությունները լրացուցիչ հիմնավորվում են համացանցում հասանելի մի շարք տեսանյութերով, որոնք միտված են նյութապես աջակցելու միջոցով խրախուսելու արտերկրում բնակվող անձանց Հայաստան գայուն կամ «Ուժեղ Հայաստան» դաշինքի օգտին քվեարկելուն:

Գործատուների կողմից աշխատակիցների նկատմամբ ճնշումներ և ուղղորդումներ

«Ականատես»-ն արձանագրել է մասնավոր սեկտորի խոշոր ընկերությունների և հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների ղեկավար կազմերի կողմից աշխատակիցների քաղաքական կողմնորոշման վրա ապօրինի ազդեցության, ճնշումների և ընտրական գործընթացներին հարկադրված ներգրավման դեպքեր, ինչն ուղղակիորեն խաթարում է ընտրողների ազատ կամարտահայտման իրավունքը:

- Ըստ առաքելության կողմից ստացված տեղեկության՝ Վաղարշապատ համայնքում «Էտալոն Գամմա» ընկերությանը պատկանող զինամթերքի փայտյա պահատուփերի արտադրամասի ղեկավար Արմեն Ավինյանը (Տիգրան Ավինյանի հայրը) ուղղորդել է աշխատակիցներին՝ բանեցնելով նաև ճնշում և պնդելով, որ գործող իշխանություններին չընտրելու դեպքում «պատերազմ էլի կլինի»:

- Նոյեմբերյանում ՀԷՑ մասնաճյուղի տնօրեն Ա. Հարությունյանը (որը նաև թիվ 37 ԸԸՀ նախագահն է) աշխատակիցներին «տեղեկացրել է», որ նրանք պետք է զերծ մնան ընդդիմության հավաքներին մասնակցելուց՝ պնդելով, թե ՀԷՑ-ն այժմ պետական է:

- Արարատի ցեմենտի գործարանի աշխատակիցների նկատմամբ գործադրվել են ճնշումներ՝ պնդելով, որ ընտրեն «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, կամ առնվազն՝ ոչ մի դեպքում չընտրեն ներկայիս իշխանությանը:

Հավաքներին մասնակցելու հարկադրանք

Գործատուների կողմից աշխատակիցներին նախընտրական հավաքների մասնակցությանը պարտադրելը և հակառակ կարծիք ունենալու համար աշխատանքից ազատելը/ազատման դիմում ներկայացնելուն պարտադրելը հավաքների ազատության, ինչպես նաև աշխատանքային իրավունքների խախտում է: Հավաքին մասնակցելուն անձին հարկադրելը շանտաժի, աշխանաքի կորստի սպառնալիքի միջոցով, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը կարող է

որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ և 203-րդ հոդվածներով (հավաքին մասնակցելուն հարկադրելը, խտրականությունը):

«Ականատես» դիտորդական առաքելությունը ստացել է մի շարք տեղեկություններ քաղաքացիների՝ հավաքներին հարկադրաբար ներգրավելու վերաբերյալ: Մասնավորապես՝

- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի աշխատակիցներ հրահանգ են ստացել մարզերից ժամանել Երևան՝ մասնակցելու «Ուժեղ Հայաստան» կուսակցության ապրիլի 11-ին կայացած հանրահավաքին: Ըստ ահազանգի՝ գործընթացն ուղեկցվել է աշխատանքից ազատման կամ այլ բացասական հետևանքների անուղղակի սպառնալիքներով:

- «Տաշիր Պիցցա» սննդի կետերի ցանցի երևանյան մասնաճյուղերից մեկում տեղի ղեկավարությունը պարտադրել է անձնակազմին ապահովել ներկայություն ապրիլի 11-ին կայացած «Ուժեղ Հայաստան» կուսակցության հանրահավաքին: Որոշ աշխատակիցներ չեն ենթարկվել հրահանգին, ինչի հետևանքով ստիպված են եղել աշխատանքից ազատման դիմում ներկայացնել: Աշխատանքից հեռացվածների թվում է նաև մասնաճյուղի մենեջերը, ում նկատմամբ ճնշումները, ըստ ահազանգի, կրել են թիրախային բնույթ՝ կապված նաև վերջինիս՝ «Միասնության թևեր» կուսակցության համակիր հանդիսանալու հանգամանքի հետ:

Նշված երկու դեպքերի վերաբերյալ հաղորդումներ են ներկայացվել ՀՀ իրավապահ մարմիններին: Առաջին դեպքի մասով ՀՀ քննչական կոմիտեում արդեն իսկ նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ի լրումն, ստացվել են ահազանգեր վարչական ռեսուրսի օգտագործմամբ հավաքներին մասնակցություն ապահովելու վերաբերյալ:

- Ախուրյան համայնքի ենթակայության տակ գտնվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների անձնակազմերին հրահանգվել է ապահովել պարտադիր ներկայություն 2026 թվականի ապրիլի 19-ին Գյումրու Վարդանանց հրապարակում կազմակերպված «Խաղաղության ձայնը» երաժշտական փառատոնին, որի շրջանակներում ելույթ է ունեցել նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Վարչաբենդ» խմբով: Ըստ ստացված տեղեկությունների, աշխատակիցներից պահանջվել է նաև կազմակերպել տեղափոխումը սեփական տրանսպորտային միջոցներով՝ ուշադրություն չգրավելու համար: Զուգահեռաբար, առաքելությունը տեղեկություններ է ստացել նաև հանրակրթական դպրոցների աշխատակիցների ուղղորդման վերաբերյալ: Ահազանգերի համաձայն՝ իշխող “Քաղաքացիական պայմանագիր” կուսակցության Գյումրիի գրասենյակի ներկայացուցիչների կողմից Ախուրյան համայնքի դպրոցների տնօրինություններին տրվել են համապատասխան ցուցումներ՝ մանկավարժական կոլեկտիվների մասնակցությունը համերգին ապահովելու նպատակով:

«Ականատես» դիտորդական առաքելությունը բոլոր նշված դեպքերով ներկայացրել է հաղորդումներ իրավասու մարմիններին՝ պահանջելով նախաձեռնել քրեական վարույթ և պարզել դեպքերի հանգամանքներն ու պատշաճ գնահատական տալ ենթադրյալ հանցավոր արարքներ կատարած անձանց գործողություններին:

Երեխաների ներգրավում քարոզչությանը

Դիտարկված ժամանակահատվածում արձանագրվել են տարբեր կուսակցությունների քարոզչական միջոցառումներին ու հավաքներին փոքրահասակ երեխաների ներգրավման դեպքեր: Թեև երեխաների մասնակցությունը հասարակական կյանքին միջազգային իրավական փաստաթղթերով ճանաչված իրավունք է, միջազգային չափանիշներով սահմանված են հստակ երաշխիքներ՝ նման մասնակցության համատեքստում երեխայի իրավունքների լիարժեք պաշտպանության ապահովման նպատակով:

Այսպես, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան պարտավորեցնում է պետություններին պաշտպանել երեխային «նրա բարեկեցությանը որևէ տեսանկյունից վնասող շահագործման բոլոր այլ ձևերից»: Դրան զուգահեռ, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն ընդգծում է, որ երեխաները չպետք է ենթարկվեն ճնշումների կամ մանիպուլյացիայի՝ իրենց տեսակետները արտահայտելու իրավունքն իրացնելիս, իսկ երեխաների մասնակցության գործընթացները պետք է լինեն կամավոր և իրականացվեն այնպիսի եղանակներով, որոնք անվտանգ են և հաշվի են առնում հնարավոր ռիսկերը: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը համատեղ դիրքորոշմամբ շեշտել են, որ քաղաքական կուսակցությունների կողմից ընդունվող վարքագծի կանոնների շրջանակում նրանք պետք է հանձն առնեն չխրախուսել, հորդորել կամ հարկադրել երեխաներին մասնակցել քաղաքական հավաքների կամ ցույցերի: Հանրահավաքներին և քարոզչական երթերին մասնակցող երեխաները կարող են ենթարկվել զանգվածային հրմշտոցի, բռնության, ճանապարհատրանսպորտային պատահարների, ինչպես նաև ոչ պատշաճ լեզվի և վարքագծի ազդեցության ռիսկերի: Ի լրումն, խնդրահարույց է նաև դպրոցական միջավայրի քաղաքականացումն ու երեխաների ներգրավումը քաղաքական բեմականացումներում, որոնք խաթարում են կրթական գործընթացի չեզոքությունը և երեխայի իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների ապահովումը: Համապատասխանաբար, կուսակցություններին և քաղաքական գործիչներին խորհուրդ է տրվում ձեռնպահ մնալ քաղաքական հանրահավաքներին և այլ զանգվածային միջոցառումներին երեխաներին ներգրավելուց:

Չնայած դրան, արձանագրվել են մի շարք դեպքեր, որտեղ անչափահաս երեխաները ներգրավվել են կուսակցությունների քարոզարշավին կամ դրան առնչվող միջոցառումներին:

- Երևանում ապրիլի 11-ին կայացած «Ուժեղ Հայաստան» կուսակցության հանրահավաքին արձանագրվել է բազմաթիվ անչափահասների, ինչպես նաև ուսուցիչների կողմից ուղեկցվող խմբերի կազմակերպված ներկայություն: Անչափահասներին տրամադրվել են կուսակցության լոգոտիպով հագուստ և դրոշներ: Նույն կուսակցության հավաքներին անչափահասների կազմակերպված տեղափոխման փորձեր են եղել նաև Մասիսում, սակայն երեխաների ծնողները արգելել են երեխաներին մասնակցել:

- Ապրիլի 25-ին Արարատի մարզի Այգեզարդ գյուղի Արարատ Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոցի ֆեյսբուքյան էջում հրապարակվել է «Նշում ենք քաղաքացու օրը» վերտառությամբ տեսանյութ, որտեղ երևում է, թե ինչպես են դպրոցի աշակերտները բեմում կատարում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և նրա քաղաքական քարոզչության հետ ասոցացվող «Իրական Հայաստան՝ Հայաստանի Հանրապետություն» երգը: Հաջորդ օրը տեսանյութը հեռացվել է դպրոցի ֆեյսբուքյան էջից: Հետագայում դպրոցի տնօրենը պարզաբանում է ներկայացրել և հիմնավորել տվյալ դեպքը իր անտեղյակությամբ և տվյալ երգը երեխաների կողմից ընտրելու հանգամանքով:

- Ապրիլի 26-ին, Նիկոլ Փաշինյանը Տավուշի մարզ կատարած այցի շրջանակներում մասնակցել է Բագրատաշեն համայնքում մանկապարտեզի բացմանը, որի ընթացքում երեխաները «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ ասոցացվող ժեստերով, պոստերներով ու փուչիկներով կազմակերպված դիմավորել են ՀՀ վարչապետին:

- Ապրիլի 25-ին Թալինում և Արարատի մարզում նկատվել են մոտ 15-17 տարեկան երիտասարդներ, որոնք բաժանել են «Ուժեղ Հայաստան» կուսակցության բուկլետներ և իրազեկման թերթիկներ: Նույն օրը դիտորդները նկատել են նաև մոտ 100-ից ավել երիտասարդների (այդ թվում՝ անչափահասների), որոնք մեծ ավտոբուսով ժամանել են Թալինի «Ուժեղ Հայաստան» գրասենյակ, ստացել քարոզչանյութեր և ցրվել քաղաքի տարբեր հատվածներ՝ բնակիչներին հաջորդ օրը կայանալիք գրասենյակի բացմանը հրավիրելու համար:

- Ապրիլի 18-ին (աշխատանքային օր) ժամը 12:00-ին «Հայաստան» դաշինքի առաջնորդ Ռ. Քոչարյանի հետ հանդիպման ժամանակ Լոռու ժամանցի կենտրոնի մուտքի մոտ դիտարկվել են 5-7 դպրոցական տարիքի երիտասարդներ, որոնք ներգրավված են եղել հավաքներում դասաժամերի ընթացքում:

Վարչական ռեսուրսի օգտագործում

Ընտրական գործընթացների նկատմամբ կիրառվող միջազգային չափանիշների համաձայն՝ պետությունները պետք է ապահովեն վարչական ռեսուրսների չեզոք և ոչ խտրական օգտագործումը և զերծ մնան այնպիսի քայլերից, որոնք կարող են ընկալվել որպես ընտրողների վրա ազդելու կամ նրանց աջակցությունը խթանելու միջոց: Նյութական, ֆինանսական կամ հանրային ոլորտի մարդկային ռեսուրսները չպետք է չարաշահվեն որևէ քաղաքական կուսակցության կամ թեկնածուի օգտին կամ դեմ: Միջազգային չափանիշների համաձայն՝ վարչական ռեսուրսի չարաշահման կանխարգելմանն ուղղված սկզբունքները գործում են ընտրական գործընթացի ողջ ժամանակահատվածում, ներառյալ՝ ընտրական շրջանի վաղ փուլերը:

Խնդրահարույց նախաձեռնություններ

Վարչական ռեսուրսը ներառում է նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց ծառայողական դիրքից և պաշտոնեական լիազորություններից բխող իրավական, կազմակերպական և վարչական լծակները: Ընտրություններին անմիջապես նախորդող ժամանակահատվածում ընդունվող սոցիալ-

տնտեսական առումով շահեկան որոշումները կարող են ստեղծել ընտրողների վրա հնարավոր ազդեցության կամ նման ազդեցության ընկալման ռիսկեր, ինչպես նաև՝ ազդել քաղաքական մրցակցության հավասար պայմանների ընկալման վրա:

ԱԺ ընտրություններին նախորդող ժամանակահատվածում ՀՀ կառավարությունը կամ այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները ընդունել կամ հրապարակայնացրել են մի շարք որոշումներ, որոնք ընկալվել են հանրության կողմից որպես նախընտրական բնույթի նախաձեռնություններ: Առանձնապես խնդրահարույց են այն նախաձեռնությունները, որոնք նախապես նախատեսված չեն եղել հաստատված ծրագրերով կամ բյուջեներով: Այսպես,

- 2026 թ. փետրվարի 26-ին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարել է, որ մայիսի 1-ից Երևանի համայնքային մանկապարտեզների աշխատողների աշխատավարձերը կբարձրանան 15-20 տոկոսով:

- 2026 թ. մարտի 5-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշումը, որի արդյունքում ներդրվել է էլեկտրամոբիլների գույքահարկի հաշվարկի նոր մեխանիզմ՝ նախատեսելով նվազեցնել վճարման ենթակա գույքահարկի չափը:

  «Ականատես» դիտորդական առաքելությունը հարցում է ուղարկել ՀՀ Ներքին գործերի նախարարություն՝ վերոնշյալ որոշման նախաձեռնման ժամկետայնության վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով: Նախարարության հավաստմամբ՝ էլեկտրամոբիլների շարժիչի հզորությանը վերաբերող խնդրի կարգավորման վերաբերյալ քննարկումները սկսվել են 2025 թվականի մարտից, երբ մի շարք քաղաքացիների ներկայացրած դիմումների արդյունքում արձանագրվել են համապատասխան կարգավորումներում առկա խնդիրները: 2025 թվականի ընթացքում քննարկվել են տարբեր լուծումներ, և արդյունքում նախագիծը դրվել է արտաքին շրջանառության մեջ 2025թ. դեկտեմբերի 15-ին, իսկ 2026 թ. փետրվարի 2-ին ներկայացվել է նախարարական կոմիտե: Ներքին գործերի նախարարությունը նշել է, որ կատարված փոփոխությունները նախապատրաստվում էին վաղուց և ընտրությունների հետ առնչություն չեն ունեցել:

  Այս բացատրությունը չի փարատում վարչական ռեսուրսի օգտագործման վերաբերյալ կասկածը, քանի որ, իրականում, էլեկտրոմոբիլների գույքահարկի հաշվարկման համակարգին առնչվող խնդիրները բարձրացվել և քննարկման առարկա են դարձել Կառավարության կողմից դեռևս 2024 թ.-ին: Մասնավորապես, 2024թ. հոկտեմբերի 10-ի Կառավարության նիստին ՀՀ ֆինանսների նախարարի հայտարարությունից բխում է, որ քաղաքացիների կողմից բարձրաձայնված խնդիրները հիմք են հանդիսացել համապատասխան ուսումնասիրության իրականացման համար, և որ նախարարությունը կներկայացնի էլեկտրամոբիլների գույքահարկի հաշվարկման առավել արդար մեխանիզմի առաջարկ մինչև 2024 թվականի ավարտը:

- ՀՀ կառավարության 2026 թվականի մարտի 5-ի թիվ 244-Ն որոշմամբ սահմանվել է, որ նույն թվականի ապրիլի 1-ից բարձրանալու են հաշմանդամության նպաստների չափերը: Մասնավորապես, 10,000 ՀՀ դրամով բարձրացվել են հաշմանդամության նպաստները ֆունկցիոնալության տարբեր աստիճանի սահմանափակումներ ունեցող անձանց և հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Այս մասին 2026 թվականի մարտի 24-ին հայտնել էր ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը:

  Այս որոշման առնչությամբ «Ականատես» դիտորդական առաքելության կողմից հարցում է ուղղվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ պարզաբանելու, թե ե՞րբ են նախաձեռնվել փոփոխությունները, արդյո՞ք դրանք նախապես պլանավորված են եղել պետական բյուջեով, ի՞նչով է պայմանավորված նպաստների բարձրացման որոշման ընդունումը հենց նախընտրական ժամանակահատվածում:

  Ի պատասխան հարցմանը՝ նախարարությունը որպես հիմնավորում մատնանշել է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը, որով նախատեսված է 2022-2026 թթ. պարբերաբար բարձրացնել կենսաթոշակների ու նպաստների չափերը՝ պետական բյուջեով ծախսեր նախատեսված լինելու դեպքում:

  Նախարարության այս պատասխանը ըստ էության չի հասցեագրում բարձրացված հիմնական մտահոգությունը: Թեև նախարարությունը վկայակոչում է կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի շրջանակներում իրականացվող «պարբերական» վերանայումները, նա չի տալիս հստակ պարզաբանում, թե ինչու է 10,000 ՀՀ դրամի չափով կտրուկ բարձրացումը համընկել հենց ընտրական ժամանակահատվածի հետ: Պետք է նշել, որ վերջին անգամ հաշմանդամության նպաստների չափի բարձրացում եղել էր 2023 թվականին, և այս գործողությունները կարող էին իրականացվել առնվազն ընտրական ժամանակահատվածին նախորդող շրջանում:

- Ապրիլի 1-ից Մասիս համայնքում 15-20%-ով բարձրացվել են բոլոր նախադպրոցական (մանկապարտեզների) և արտադպրոցական հաստատությունների աշխատակիցների աշխատավարձերը:

- Ապրիլի 22-ին Ռոմանոս Պետրոսյանը իր ֆեյսբուքյան էջում հայտնել է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀԷՑ) ՓԲԸ-ն նոր բաժանորդ դառնալու (սպառման էներգահամակարգը բաշխման ցանցին միացնելու) համար սակագները նվազեցրել է 40%-ով, իսկ նոր հզորությունների միացման վճարները՝ մինչև 55%-ով:

- Գյումրիում բարձրացվել են թանգարանային աշխատողների (մասնավորապես՝ Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանի) աշխատավարձերը, ինչը նախապես պլանավորված չի եղել համայնքային բյուջեով:

- Ստեփանավանի համայնքապետարանը 20 մարտի 2026 թվականի N 21-Ա որոշմամբ կանանց «միամսյակի» կապակցությամբ զոհված զինծառայողների կանանց նվիրաբերել է 50,000-ական ՀՀ դրամ (նախկինում՝ Մայիսի 9-ի առթիվ, տրամադրվել է 10,000-ական դրամ):

Քարոզչության իրականացում ի պաշտոնե հանդես գալիս

- Ստեփանավանի գյուղատնտեսական քոլեջի դասախոսներ Աղավնի Նալբանդյանն ու Կամո Ջիլավյանը ուսումնական հաստատությունում կրել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ ուղղակիորեն ասոցացվող խորհրդանիշը՝ «նարնջագույն քարտեզով» կրծքանշաններ:

Կուսակցական քարոզարշավի նույնացում կառավարության գործունեության հետ

ԵԱՀԽ (նախկինում՝ ԵԱՀԿ) մարդկային չափման Կոպենհագենի խորհրդաժողովի փաստաթուղթն ընդգծում է պետության և քաղաքական կուսակցությունների հստակ տարանջատման և կուսակցությունների՝ պետության հետ սերտաճման բացառման, ինչպես նաև կուսակցությունների հավասար մրցակցության համար անհրաժեշտ իրավական երաշխիքների ստեղծման անհրաժեշտությունը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության փաստացի աշնան սկզբից սկսված քարոզարշավի հիմքում հասկանալիորեն ընկած են ՀՀ կառավարության գործունեության հիմնական թիրախները, մասնավորապես՝ խաղաղության օրակարգը և ազգային անվտանգության հարցերը: Սակայն կուսակցության գործունեությունը, այդ թվում՝ կարգախոսներն ու սիմվոլները, հաճախ դժվար է տարանջատել Կառավարության գործունեությունից: Օրինակ՝

- 2026 թվականի հունվարի 1-ին Երևանի Հանրապետության հրապարակում կայացած ամանորյա տոնակատարության ընթացքում տեղի է ունեցել լուսային դրոնների շոու: Միջոցառման այս հատվածը ֆինանսավորվել է մասնավոր սեկտորի ներկայացուցչի՝ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից: Դրոնների ցուցադրության ընթացքում երկնքում լուսային պատկերների միջոցով վերարտադրվել են «Խաղաղություն» բառը և ձեռքերով կազմված «սրտի» նշանը: Նշված երկու տարրերն էլ «որդեգրվել» են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից, և վերջինիս նախընտրական և քաղաքական հաղորդակցության մեջ առավել հաճախ գործածվող և նույնականացվող կարգախոսն ու խորհրդանիշն են:

Նյութական, ֆինանսական, մարդկային ռեսուրսների օգտագործում քարոզչության նպատակով

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է իրենց պաշտոնեական (ծառայողական) դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար: Նույն օրենքի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ընդունված վարքագծի կանոնագրքով: Ըստ Կանոնագրքի. *«55. Հանրային պաշտոն*

զբաղեցնող անձը պարտավոր է իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների համար տրամադրված հանրային ռեսուրսները (այդ թվում՝ մարդկային ռեսուրսները, աշխատաժամանակը) օգտագործել բարեխղճորեն՝ բացառապես իր լիազորությունների իրականացման նպատակով, ինչպես նաև՝ չօգտագործել հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց և հանրային ծառայողների աշխատաժամանակը սեփական շահերը բավարարելու կամ այլ մասնավոր նպատակներով: (...) 63. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր պաշտոնեական (ծառայողական) պարտականություններն իրականացնելիս չկատարել կուսակցական շահը սպասարկելու համար հանրային ռեսուրսները տրամադրելու պահանջները, ինչպես նաև նման պահանջներ չներկայացնել հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների:...»:

- 2026 թ. մարտի 20-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան էջում հրապարակվել է «Պատերազմի դուռը բացողները» վերտառությամբ տեսահոլովակ, որը նկարահանվել է ՀՀ կառավարության իր աշխատասենյակում, ենթադրաբար Կառավարության մարդկային և նյութատեխնիկական միջոցների օգտագործմամբ: Տեսահոլովակում ՀՀ վարչապետը խոսում է 2026 թվականի հունիսի 7-ի ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած Գագիկ Ծառուկյանի, Ռոբերտ Քոչարյանի և Սամվել Կարապետյանի կողմից Հայաստանի և Ադրբեջանի միջև հաստատված խաղաղությունը վերանայելու քաղաքականություն որդեգրելու մասին, ինչը նշանակում է, որ նրանք գնում են պատերազմի «դուռը բացելու» ճանապարհով: *«...ես որևէ կասկած չունեմ, որ 2026 թվականի խորհրդարանական ընտրություններում Հայաստանի Հանրապետության ժողովուրդը տեր է կանգնելու խաղաղությանը...»*, նշել է Ն. Փաշինյանը: Այս տեսահոլովակը տեղադրվել է նաև ՀՀ կառավարության յութուբյան պաշտոնական ալիքում, այնուհետև՝ հանվել:

- 2026 թ. մարտի 23-ին հրապարակվել է մեկ այլ տեսանութ, որը կրկին նկարահանվել է ՀՀ վարչապետի աշխատասենյակում: Տեսանյութում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոսում է առաջնորդությունը ժողովրդի կողմից իր կողմից ղեկավարվող քաղաքական ուժին վերապատվիրակելու անհրաժեշտության մասին: Տեսանյութը ի սկզբանե հրապարակվել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան էջում, որը որոշ ժամանակ անց հեռացվել է էջից, սակայն համացանցում պահպանվել է տեսանյութ, որի եզրային հատվածները մգեցվել են (blur):

Ն.Փաշինյանի վերոնշյալ ելույթները, մեր գնահատմամբ, պարունակել են իշխող քաղաքական ուժի օգտին քարոզչության իրականացման տարրեր, իսկ համապատասխան հանրային ռեսուրսները ընտրական գործընթացի ժամանակահատվածում օգտագործվել են կուսակցության համար փաստացի առավելություն կամ արտոնություն ապահովելու նպատակով:

- 2026 թվականի մարտի 22-ին «Արմենպրես» պետական լրատվական գործակալության կայքէջում հրապարակվել է «ՔՊ ներկայացուցիչները ներկուսակցական քարոզարշավի շրջանակներում շրջում են Երևանում» վերտառությամբ մի հոդված, որով ներկայացրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչների և ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի

ներկուսակցական քարոզարշավի շրջանակներում կատարված այցերի մանրամասները Երևան քաղաքի Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջաններում:

Հակառակ սրան՝ գործակալության կայքէջում նույն ժամանակահատվածում չէր հայտնաբերվել ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած այլ քաղաքական ուժերի կողմից քարոզչական բնույթի միջոցառումների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն: «Արմենպրես» գործակալությունը, հանդիսանալով պետական լրատվական գործակալություն, չի կարող օգտագործվել կամ օգտագործել իր տիրապետման տակ գտնվող ռեսուրսները իշխող քաղաքական ուժի օգտին քարոզչության իրականացման նպատակով՝ խախտելով պետության և քաղաքական կուսակցության միջև հստակ տարանջատման և վարչական ռեսուրսների չարաշահման բացառման սկզբունքները:

- 2026 թվականի ապրիլին Հայաստանի երկու խոշոր քաղաքներում տեղի են ունեցել «Խաղաղության ձայնը» խորագրով երաժշտական փառատոններ. ապրիլի 19-ին Գյումրու Վարդանանց հրապարակում և ապրիլի 25-ին Երևանի Հանրապետության հրապարակում: Ապրիլի 19-ին Գյումրու Վարդանանց հրապարակում տեղի ունեցացած փառատոնին, որպես կատարող, հրավիրվել և մասնակցել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Վարչաբենդ» երաժշտական խմբի կազմում: Նիկոլ Փաշինյանն Գյումրիի Վարդանանց հրապարակում կայացած փառատոնից հետո հայտարարել էր, որ «Վարչաբենդ» երաժշտական խումբը ելույթ կունենա նաև ապրիլի 25-ին՝ Քաղաքացու օրը Հանրապետության հրապարակում կայանալիք փառատոնին:

  ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ինչպես նաև կուսակցության անդամների կողմից փառատոնի ակտիվ գովազդման և դրանում ներգրավման համատեքստում առկա են մի շարք հարցեր: Մասնավորապես, խնդրահարույց են խոշոր միջոցների ներգրավմամբ փառատոնի անցկացումը ընտրությունների նախաշեմին՝ պետական տոնի հետ որոշակի փոխկապակցմամբ, դրա հնարավոր ծառայեցումը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավին, ինչպես նաև իրավաբանական անձի կողմից կուսակցության օգտին իրականացվող գործունեության տեսքով նվիրատվության հանգամանքը: «Ականատես» դիտորդական առաքելությունը հարցումներ է ուղարկել ՀՀ կառավարություն և «Ֆաստ Բանկ» ՓԲԸ՝ պարզելու, թե կոնկրետ որքա՞ն միջոց է ծախսվել փառատոնի կազմակերպման ու իրականացման համար, արդյո՞ք փառատոնը կազմակերպվել է ՀՀ կառավարության կամ որևէ այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից, թե՞ վերջիններս պարզապես համագործակցել կամ համակարգել են գործընթացը: Հարցադրում է արվել նաև, թե արդյո՞ք «Խաղաղության ձայնը» փառատոնը հանդիսացել է ՀՀ քաղաքացու օրվա պաշտոնական տոնակատարությունների մաս, ինչո՞վ է պայմանավորված այս տարի տվյալ տոնն առանձնահատուկ կերպով նշելու հանգամանքը, ինչպե՞ս է ընտրվել փառատոնի խորագիրը: «Ֆաստ Բանկ» ՓԲԸ-ն մինչ օրս չի պատասխանել հարցմանը: Վարչապետի աշխատակազմից պատասխանել են, որ «Վարչաբենդ» երաժշտական խումբը ապրիլի 25-ին Երևանի Հանրապետության հրապարակում կայացած փառատոնին չի մասնակցել, այդ փառատոնը անցկացրել է «Դոմինո փրադաքշընն»

ընկերությունը, որը դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմ այդ նախաձեռնությամբ, որն ընդունվել է ի գիտություն, և փառատոնի համար պետբյուջեից գումար չի հատկացվել:

Կուսակցությունների ֆինանսավորում

Նախընտրական քարոզչության ֆինանսավորման նպատակով ուսումնասիրվել են մասնակից, այդ թվում՝ դաշինքներում ընդգրկված կուսակցությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

Քաղաքական ֆինանսավորման թափանցիկության և հաշվետվողականության տեսանկյունից վեր են հանվել մի շարք լրջագույն թերություններ ու խնդիրներ, որոնք մեծ չափով անվերահսկելի են դարձնում նախընտրական քարոզարշավի ծախսերը: Չնայած, որ ընտրությունների մասնակից գրեթե բոլոր քաղաքական ուժերը, մինչև ԿԸՀ-ում հայտ ներկայացնելը՝ ընտրություններին նախորդող ամիսներին ակտիվ և տեսանելի քարոզչություն են իրականացրել, դրանց առնչվող ծախսերը կա՛մ հասանելի չեն, կա՛մ թաքցվում են օրենսդրական բացերի ու սահմանափակումների պատճառով:

2025 թվականի գործունեության թափանցիկության խնդիրներ

Համաձայն գործող օրենսդրության յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ին կուսակցությունները ԿԿՀ-ին ներկայացնում են հաշվետվություն իրենց նախորդ տարվա ֆինանսական մուտքերի և ծախսերի վերաբերյալ: Սույն զեկույցի նախապատրաստման ընթացքում ԿԿՀ կայքում հասանելի են գործող բոլոր կուսակցությունների 2025 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ այն կուսակցությունների, որոնք ենթակա են պարտադիր աուդիտի: Աուդիտի ենթակա կուսակցությունների տարեկան հաշվետվությունները հրապարակվելու են ավելի ուշ՝ աուդիտի եզրակացությունների հետ մեկտեղ՝ մայիս-հունիս ամիսներին, ինչը հավասար և համաժամանակյա հասանելիություն չի ապահովում հանրության համար՝ համադրելու և վերլուծելու ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների վերաբերյալ տվյալները:

Աուդիտի ենթակա կուսակցություններն են պետական ֆինանսավորում ստացող 5՝ «Քաղաքացիական պայմանագիր», «Հանրապետություն», «Հայ Յեղափոխական դաշնակցություն», «Վերածնված Հայաստան» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունները, ինչպես նաև 2025 թվականին 25 մլն ՀՀ դրամ շեմը գերազանցած «Առաջ» կուսակցությունը, որի ֆինանսական ակտիվ գործունեությունը պայմանավորված է եղել 2025 թվականին Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրություններին մասնակցությամբ: Հարկ է նշել, որ բացառությամբ «Վերածնված Հայաստան» կուսակցության, բոլոր նշված կուսակցությունները նախատեսում են մասնակցել առաջիկա խորհրդարանական ընտրություններին, ուստի նրանց գործունեության վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը խաթարում է հավասարության սկզբունքը:

Անհավասարության խնդիրը մեղմելու և պետական ֆինանսավորմամբ կուսակցությունների ֆինանսական հոսքերը մյուսների հետ միաժամանակ ուսումնասիրելու նպատակով Առաքելության անունից 2026 թ. հունվարի 21-ին հարցում է արվել վերը նշված հինգ կուսակցություններին՝ հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի կարգավորումը, որի իմաստով պետական ֆինանսավորում ստացող

կուսակցությունը հանդիսանում է տեղեկատվություն տնօրինող՝ բյուջետային ֆինանսավորում ստանալու ուժով, բոլոր հայցված տվյալները հանդիսանում են հրապարակման ենթակա տվյալներ կուսակցության կողմից ներկայացվելիք տարեկան հաշվետվության շրջանակներում, ինչպես նաև պահանջված տեղեկությունները չեն պարունակում որեւէ օրենքով պահպանվող, գաղտնի տվյալ, հետևաբար առկա չէ օրենքով սահմանված որեւէ հիմք մերժելու դրանց տրամադրումը:

Կուսակցություններին ներկայացվել է խնդրանք՝ տրամադրել տեղեկություն 2025 թվականին իրենց նվիրատվություն կատարած անձանց մասին՝ ներառյալ անունը, ազգանունը, հայրանունը և նվիրատվության չափը: Միայն «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն է օրենքով սահմանված ժամկետում արձագանքել հարցմանը՝ նշելով, որ 2025 թ.-ին չի ստացել ֆինանսական նվիրատվություններ, սակայն բնեղեն նվիրատվությունների մասով նշվել է, որ տվյալները դեռ հավաքագրման փուլում են և որ առավել հստակ տեղեկությունները կտրամադրվեն փետրվարի 20-ից հետո: Այնուամենայնիվ, հետագայում արձագանք չի ստացվել:

Էլեկտրոնային փոստով հարցումներն ուղարկելուց հետո նույն հարցումները նաև թղթային տարբերակով կրկին ուղարկվել են մյուս 4 կուսակցություններին: «Վերածնվող Հայաստան» կուսակցությունը ուշացումով պատասխանել է էլեկտրոնային հարցմանը՝ նշելով, որ ֆիզիկական անձանցից դրամական նվիրատվություններ չի ստացել, իսկ բնեղեն նվիրատվությունների ընդհանուր գումարը կազմել է 397,474 ՀՀ դրամ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված ժամկետում մյուս կուսակցություններից արձագանք չստանալուց հետո դատարան են ներկայացվել հայցադիմումներ՝ հարցմամբ պահանջված տեղեկությունները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջով: Հայցադիմումը ներկայացնելուց հետո «Հանրապետություն» կուսակցությունը պատասխանել է, որ 2025 թ.-ին նվիրատվություն չի ստացել, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը տրամադրել է ստացված նվիրատվությունների ցանկը, ուստի նրանց դեմ հայցադիմումները հետ են վերցվել: «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությունն առաջարկել է պահանջվող տեղեկատվությունը ստանալ 2025 թ.-ի տարեկան հաշվետվության հրապարակումից հետո՝ այդպիսով փաստացի մերժելով հարցմամբ պահանջված տեղեկատվության տրամադրումը: Այս կուսակցության մերժման առնչությամբ դատական գործը ընթացքի մեջ է:

Կուսակցությունների՝ իրենց ուղղված հարցումներն անպատասխան թողնելու պրակտիկան վեր է հանում ժողովրդավարության հիմնասյուն հանդիսացող այս կառույցների հաշվետվողականության բացը: Եվ եթե պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների համար «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակում առկա է արձագանքողականության և մերժումը վիճարկելու որոշակի մեխանիզմ, մյուսների դեպքում քաղաքացու նկատմամբ հաշվետու վարքագիծ դրսևորելու և պատասխանատվություն կրելու հիմքերը բացակայում են: Նման պրակտիկան սահմանափակում է կուսակցությունների թափանցիկությունը ու հանրային վերահսկողության հնարավորությունները և թուլացնում քաղաքական համակարգի նկատմամբ վստահությունը:

Սույն զեկույցի շրջանակում ի վերջո ուսումնասիրվել են աուդիտի ենթակա կուսակցությունների 2025 թվականի դեռևս չհրապարակված հաշվետվությունները, որոնք ստացվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից (ԿԿՀ) հարցման միջոցով:

2025 թվականի կուսակցությունների հաշվետվություններին առնչվող խնդիրներ

Ըստ ներկայացված հաշվետվությունների, 2025 թվականի ընթացքում ֆինանսական գործունեություն ծավալել են ընտրական գործընթացում ներգրավված 22 կուսակցություններից 9-ը, որոնցից 4-ը ստանում են պետական ֆինանսավորում: Ստորև աղյուսակում ներկայացված են այդ կուսակցությունների մուտքերը, այդ թվում՝ պետական ֆինանսավորման մասը, ելքերը և տարեվերջին մնացորդը:

Կուսակցություն	Ընդհանուր մուտքեր	Որից՝ պետ. ֆինանսավորում	Ելքեր	Տարեվերջի մնացորդ	Անշարժ գույք
3. «Նոր դարաշրջան» («Ուժեղ Հայաստան» դաշինք)	1,835,550	–	1,832,550	3,000	0
7. «Բարգավաճ Հայաստան»	52,662,945	*45,821,600*	52,662,945	69,984,438	0
10. Հայ ազգային կոնգրես	776,100	–	1,256,740	963,895	1
11. «Հանրապետություն»	40,257,80	37,017,80	35,513,510	32,180,235	0
16. «Քաղաքացիական պայմանագիր»	774,781,905.7	ֆ234,727,890	745,757,468.43	41,915,524.32	0
17. Հայ յեղափոխական դաշնակցություն («Հայաստան» դաշինք)	143,461,310	*127,900,00*	175,090,996	60,654,509	72
17. «Առաջ» աջակենտրոն («Հայաստան» դաշինք)	28,560,200	–	27,060,000	1,500,200	
18. «Հանուն Հանրապետության»	1,400,100	–	1,395,000	5,100	
19. «Լուսավոր Հայաստան»	3,531,138.8	–	4,152,432.9	155,562.1	0

Ստորև ներկայացվում են պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների ստացված նվիրատվությունների ուսումնասիրության արդյունքները.

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը 2025 թվականին ստացել է 416,712,288 ՀՀ դրամ նվիրատվություն և 113,318,504 ՀՀ դրամ անդամավճար: Համեմատության համար արժի նշել, որ 2024 թվականին կուսակցությունը որպես նվիրատվություն ստացել է 138,880,110 ՀՀ դրամ, իսկ որպես անդամավճար՝ 109,199,630 ՀՀ դրամ: 2025 թ.-ի 416,712,288 ՀՀ դրամ նվիրատվությունը կուսակցությունը ստացել է 1,216 անձի կողմից, ընդ որում՝ գումարի շուրջ 65%-ը՝ 270,143,600 ՀՀ դրամը, հավաքվել է 109 անձանց 1 մլն ՀՀ դրամ և ավելի փոխանցումներից:

- Ամենամեծ նվիրատվությունը՝ թույլտրելի առավելագույն 10 մլն ՀՀ դրամի չափով կատարել է Սամվել Լևոնի Օրդուխանյանը, որը «Օրդ Դեվելոփմենթ» ընկերության

համահիմնադիրն է: Տվյալ ընկերությունը Երևան քաղաքի «Կոմիտաս Պարկ» համալիրի կառուցապատողն է, որի բիզնես գործունեության շրջանակում բացահայտվել են բազմաթիվ խնդիրներ:

- Ընդհանուր 20 մլն ՀՀ դրամ են նվիրաբերել Խաչատուր Սուքիասյանը, նրա որդին՝ Ալբերտ Սուքիասյանը, եղբոր դուստրը՝ Մերի Սուքիասյանը և եղբորորդին՝ Արիկ Սուքիասյանը: Կուսակցության նվիրատուների շարքում հանդիպում են նաև Սուքիասյանների բիզնեսների հետ փոխկապակցված անձանց անուններ (ներկա/նախկին տնօրեններ):

- 2.5-ական մլն ՀՀ դրամ են փոխանցել Վայոց Ձորի մարզպետ Վահագն Արսենյանը, վերջինիս հետ փոխկապակցված Եղիշե Արսենյանը և «Ջերմուկ գրուպ»-ի տնօրեն Վլադիմիր Պողոսյանը:

- 2025 թվականի մարտի սկզբին կուսակցությանը 2-ական մլն ՀՀ դրամ են փոխանցել այժմ «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամներ Ռոբերտ Կադարյանը և Ալեքսան Ալեքսանյանը:

«Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության 2025 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվության համաձայն՝ կուսակցությունը ստացել է 9 մլն ՀՀ դրամ նվիրատվություն և 3,010,000 ՀՀ դրամ անդամավճար: 9 մլն ՀՀ դրամ նվիրատվությունը ստացվել է 18 նվիրատուի 500,000-ական ՀՀ դրամ փոխանցումներից: Բոլոր նվիրատուները ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավորներ են:

«Հանրապետություն» կուսակցության 2025 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվության համաձայն՝ կուսակցությունը նախորդ տարի ֆինանսական մուտքերի մասով ստացել է միայն պետական ֆինանսավորում:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության 2025 թվականի հաշվետվության համաձայն՝ կուսակցությունը նախորդ տարի նվիրատվություններ կամ անդամավճարներ չի ստացել:

Ընտրություններին մասնակցող 22 կուսակցություններից 3-ը գրանցվել են 2026 թվականին և, ըստ այդմ, նրանց համար առկա չեն 2025 թվականի հաշվետվությունները:

Մյուս կուսակցություններից 9-ը ներկայացրել են «0-ական» հաշվետվություններ՝ առանց նշելու ֆինանսների որևէ մուտք կամ ելք: Դրանք են՝

1. Ռեֆորմիստների կուսակցությունը
3. «Ուժեղ Հայաստան» դաշինքի «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը
3. «Ուժեղ Հայաստան» դաշինքի «Նոր դարաշրջան» կուսակցությունը
4. Հայաստանի շնորհապետական կուսակցությունը
5. «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը
8. «Ազգային ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցությունը
13. «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը
14. «Ժողովրդավարական համախմբում» կուսակցությունը
15. «Դեմոկրատիա, օրենք, կարգապահություն» կուսակցությունը

Բացի այդ, Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցությունը 2025 թվականի համար ցույց է տվել ընդամենը 2,000 ՀՀ դրամի «Այլ ելքեր»-ով ծախս, ինչն, ըստ էության, նույնպես կարելի է համարել «0-ական» հաշվետվություն:

Խիստ խնդրահարույց է կուսակցությունների համար «0-ական» տարեկան հաշվետվություն ներկայացնելը: Կուսակցություններն առնվազն, ենթադրաբար, ունենում են կենտրոնական գրասենյակներ, որոնք կարող են լինել կա՛մ կուսակցության սեփականությունը, կա՛մ վարձակալված, կա՛մ վերցված անհատույց օգտագործման: Ցանկացած դեպքում տարեկան հաշվետվությունում այդ մասին պետք է լինի որևէ նշում, և չի կարող լինել «0-ական» պատկեր, եթե դա կուսակցություն է և առնվազն կապ է ապահովում քաղաքացիների հետ: Միաժամանակ, ողջամիտ կասկած է հարուցում նաև կոմունալ ծախսերի բացակայությունը: Եթե կենտրոնական գրասենյակը որևէ կերպ շահագործվում է, և կատարվում են կոմունալ ծախսեր, միգուցե ֆիզիկական անձանց կողմից, ապա դա ևս պետք է արձանագրվի որպես բնեղենով նվիրատվություն: Կուսակցությունների տարեկան հաշվետվություններում այսպիսի խնդիրները պարբերաբար կրկնվում են, ինչը հարցականի տակ է դնում տվյալների արժանահավատությունը կամ կուսակցությունների գործունեությունը:

Պետք է հավելել, որ «0-ական» հաշվետվություն ներկայացրած կուսակցություններից երկուսի 1-ին համարի թեկնածուները հանրային իրենց խոսքում ներկայացրել են դրվագներ, որոնք գործող օրենսդրության շրջանակում հարցեր են առաջացնում:

- Հայաստանի շնորհապետական կուսակցության ցուցակի առաջին համարի թեկնածու Գուրգեն Սիմոնյանը իր մի հարցազրույցում ներկայացնում է տվյալներ կուսակցության գործունեության ապահովման նպատակով տրամադրված նվիրատվությունների/նվիրաբերությունների վերաբերյալ, որոնք, սակայն չեն ներառվել կուսակցության տարեկան հաշվետվությունում:

- «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության թեկնածու Սուրեն Պետրոսյանն իր խոսքում նկարագրել է փաստացի բնեղենով նվիրատվության, այդ թվում՝ հնարավոր արգելված աղբյուրներից ստացված նվիրատվությունների, կուսակցության օգտին անհատույց աշխատանքի կատարման և/կամ ծառայությունների մատուցման, ինչպես նաև կուսակցության ներկայացրած տարեկան հաշվետվության լրացման կարգի պատշաճության վերաբերյալ դեպքեր, սակայն ընդգծել, որ օրենսդրական պահանջ չկա դրանք կուսակցության հաշվետվությունում ներառելու, մինչդեռ օրենսդրությունն այս առումով սահմանում է հստակ պահանջ:

- «Բոլորին դեմ եմ» կուսակցության աջակից Արտաշես Իկոնոմովն իր հրապարակային խոսքում նշել է, որ տարիներ շարունակ աջակցել է «Ազգային ժողովրդական բևեռին» և կատարել 200,000 ԱՄՆ դոլարի նվիրատվություն: Այս դեպքը հարցեր է առաջացնում թե՛ մեկ ֆիզիկական անձի նվիրատվության սահմանաչափը անցնելու, և թե՛ կուսակցության «0-ական» հաշվետվություն ներկայացնելու մասով:

Նշված դեպքերով «Ականատես» դիտորդական առաքելությունը դիմումներ է ներկայացրել ԿԿՀ, որը հարուցել է համապատասխան վարույթներ:

Արժի նշել, որ 2024 թվականի հաշվետվությունների ուսումնասիրության արդյունքում ներկայացված առաջարկությունների մի մասն իրացվել է ԿԿՀ կողմից և 2025 թվականի հաշվետվություններն առավել ամբողջական են լրացված: Մասնավորապես հրապարակվում է «Այլ ելքեր» բաժնի բացվածքը, ինչը հաշվետվությունների տվալները ավելի թափանցիկ է դարձնում և, ըստ այդմ, ուսումնասիրությունն՝ առավել արդյունավետ: Որոշ հաշվետվություններում (օրինակ՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության դեպքում) արդեն կարելի տեսնել բնեղեն նվիրատվության տեսքով արտացոլված կոմունալ վճարումների մարումը ֆիզիկական անձանց կողմից:

Միաժամանակ, շարունակվում են տեղ գտնել մի շարք այլ խնդիրներ: Օրինակ՝ «Հայ ազգային կոնգրես» կուսակցության հաշվետվությունում թե՛ 2024-ին, թե՛ 2025-ին անդամավճարի մուծում կատարած անձանց հրապարակային տվյալներն առկա չեն, գրված է պարզապես «կուսակցության անդամ», ինչը փաստացի ոչ թափանցիկ է դարձնում կուսակցությունների հաշվետվությունը:

2026 թվականի գործունեության թափանցիկության խնդիրներ

Թափանցիկության առումով խիստ խնդրահարույց է այն հանգամանքը, որ օրենսդրության համաձայն կուսակցությունների 2026 թվականի ֆինանսական հոսքերի վերաբերյալ լիարժեք տեղեկություն հրապարակվելու է միայն 2027 թվականի փետրվար-մայիս ամիսներին: Արդյունքում անհնարին է լինելու ուսումնասիրել կուսակցությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածից դուրս, այսինքն՝ մինչև 2026 մայիսի 7-ն ընկած ժամանակահատվածում կատարվող ծախսերը և գնահատել դրանց ամբողջականությունը: Այս խնդրի հետ կապված մանրամասն անդրադարձ է կատարվել դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների կողմից և ներկայացվել են համապատասխան առաջարկություններ (1, 2):

Միաժամանակ, ԿԸՀ կայքում հասանելի են մասնակից կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրերը, որոնցում ներկայացվում է նախորդող 12 ամիսների (տվյալ դեպքում՝ 2025 ապրիլ – 2026 մարտ) տվյալները, ինչը մասամբ որոշակի հնարավորություն է տալիս ամբողջականացնել կուսակցությունների ֆինանսական գործունեության պատկերը քարոզարշավից առաջ: Այդուհանդերձ, պետք է ընդգծել, որ գործող օրենսդրությամբ կուսակցությունների կողմից հայտարարագրերի լրացումը հաճախ թերի է կամ սխալ, ինչը սակայն չի առաջացնում որևէ պատասխանատվություն: Ամբողջությամբ բաց է մնում 2026 թ. ապրիլ ամսվա ֆինանսական գործունեությունը, որը կարտացոլվի միայն 2027 թվականին հրապարակվելիք տարեկան հաշվետվություններում: Իսկ նախընտրական քարոզչության ծախսերը հնարավոր կլինի վերլուծել նախընտրական հիմնադրամների հայտարագրերի միջոցով, որոնք հիմնականում կվերաբերեն նախընտրական քարոզչության ժամանակահատվածի ծախսերին:

Բացի այդ վերլուծության շրջանակից որոշ չափով դուրս են մնում այն կուսակցությունները, որոնք գրանցվել են միայն 2026 թվականին կամ գործող այլ կուսակցության անվանափոխություն են կատարել («Բոլորին դեմ եմ», «Քոչարի ազգային վերածնունդ և ազգի զարթոնք» և «Միասնության թևեր» կուսակցությունները): Եթե 2026 թվականին գրանցված կուսակցությունների դեպքում 2025 թվականի հաշվետվությունները առկա չեն օբյեկտիվ պատճառով, ապա անվանափոխության դեպքում, բովանդակային առում

տարբերվող կուսակցությունների հաշվետվությունների վերլուծությունն անարդյունավետ է: Չնայած գույքի և եկամուտների հայտարարագրերի առկայությունը որոշակի տվյալներ հասանելի է դարձնում, սակայն, ինչպես նշվեց, ներկայացվող տեղեկությունների արժանահավատությունը ցածր է, հիմնականում՝ պայմանավորված իրավական պատասխանատվության բացակայությամբ:

Ֆինանսական հաշվետվողականության պահանջների շրջանցում

Ընտրություններին նախորդող ժամանակահատվածում որոշ քաղաքական ուժեր իրականացրել են ակտիվ քարոզարշավ առանց գրանցված լինելու որպես կուսակցություն, ինչի արդյունքում նրանց գործունեությունը եղել է ոչ թափանցիկ, հաշվետվողականության ու պատասխանատվության մեխանիզմներից դուրս: Այսպես՝

- «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը թե համացանցում, թե կենդանի ակտիվ քաղաքական քարոզչություն էր իրականացնում՝ ««Մեր ձևով» շարժում» անվան ներքո, որը գրանցված միավորում չէ և ենթակա չէ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հաշվետվողականության մեխանիզմներին: Այս ձևաչափի պարագայում հանրության և ընտրողի համար հասանելի չէ և ամենայն հավանականությամբ՝ չի էլ լինի, թե ինչ միջոցներով է իրականացվել լայնածավալ և թանկարժեք քարոզչությունը և որքան գումար է ծախսվել:

- «Միասնության թևեր» քաղաքական ուժը, հանդես գալով որպես նախաձեռնություն, գրանցվել է որպես կուսակցություն ընդհուպ ընտրությունների գրանցման ժամկետին մոտ: Այն ևս իրականացրել է ակտիվ քարոզչություն, այդ թվում՝ համացանցում, սակայն նրա գովազդային վահանակների և այլ քարոզչական գործողությունների ֆինանսական աղբյուրները հայտնի չեն և գործող օրենսդրական բացերի պատճառով կմնան ոչ հասանելի հանրությանը:

- Ուշ գրանցված լինելու բերումով ֆինանսական տվյալների ոչ ամբողջական հասանելիության խնդիրը վերաբերելի է նաև «Բոլորին դեմ եմ» և «Քոչարի ազգային վերածնունդ և ազգի զարթոնք» կուսակցություններին, թեև հարկ է նկատել, որ վերջինի դեպքում քարոզչական ակտիվություն չի նկատվել:

Դիտորդների իրավունքների խոչընդոտում

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Տեղական դիտորդների ձեռնարկի համաձայն՝ դիտորդները պետք է ակտիվորեն համագործակցեն քաղաքական կուսակցությունների և թեկնածուների հետ՝ հանդիպելով նրանց, տեղեկություններ հավաքելով քարոզարշավի շրջանակում իրականացվող գործունեության մասին և գնահատելով նախընտրական միջավայրը:

Դիտորդները պետք է շփվեն հնարավորինս լայն շրջանակի քաղաքական դերակատարների հետ՝ առանց կողմնակալության, ինչպես իշխանական, այնպես էլ ընդդիմադիր ուժերի ներգրավմամբ, և պետք է պատրաստ լինեն լսելու նրանց մտահոգությունները ինչպես նախընտրական, այնպես էլ հետընտրական փուլերում: Այս չափանիշները վերահաստատում են, որ կուսակցությունների գործունեության դիտարկումն ու նրանց հետ շփումը հանդիսանում են ընտրությունների դիտորդության իրականացման կարևոր մեթոդաբանական բաղադրիչ:

«Ականատես» առաքելության կողմից դիտարկումների ընթացքում արձանագրվել են դիտորդի իրավունքների խոչընդոտման և անհարգալից վերաբերմունքի դրսևորման դեպքեր:

2026 թվականի մարտի 27-ին Կապան համայնքում արձանագրվել է դիտորդի նկատմամբ հավաքներին մասնակցելու իրավունքի խոչընդոտման դեպք: Մասնավորապես, նախապես հրապարակային եղանակով «Ուժեղ Հայաստան» կուսակցության՝ Կապանի բնակիչների հետ հրավիրված հանդիպման ընթացքում «Ականատես» առաքելության դիտորդը ներկայացել է որպես դիտորդ, ընդ որում, կրելով ԿԸՀ կողմից տրամադրված համապատասխան վկայական: Սակայն, երբ կուսակցության ներկայացուցիչը պարզել է նրա դիտորդ լինելու հանգամանքը, վերջինիս չի թույլատրվել ներկա գտնվել միջոցառմանը և նա ապօրինի կերպով դուրս է հրավիրվել տարածքից: Միևնույն ժամանակ, որևէ պատճառաբանություն չի ներկայացվել հավաքին դիտորդի մասնակցությունը արգելելու վերաբերյալ: Հատկանշական է, որ միջադեպի ընթացքում դիտորդին տարածքից հեռանալու պահանջ է ներկայացրել փաստաբան Մուշեղ Վարդանյանը, ում ներկայացրել են որպես կուսակցության իրավաբան:

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով տվյալ միջոցառումը համարվում է հանրային հավաք: Ընդհանուր առմամբ, ընտրողների հետ հանդիպումները հանդիսանում են հանրային բնույթի միջոցառումներ, որոնք բաց են անորոշ շրջանակի քաղաքացիների մասնակցության համար: Նման պայմաններում դիտորդների ներգրավվածության սահմանափակումը կարող է հարցականի տակ դնել գործընթացների թափանցիկությունը: Նաև այսպիսի գործողությունները խաթարում են ընտրական գործընթացների բարեվարքությունն ու վստահելիությունը և առնվազն պարունակում են վարչական զանցանքի հատկանիշներ (Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգիրք, հոդված 180.1), ինչի վերաբերյալ «Ականատեսը» վարչական իրավախախտման վերաբերյալ հաղորդում է ներկայացրել ոստիկանություն, որտեղ նախաձեռնվել է վարույթ:

Բացի այդ, իրականացվող դաշտային աշխատանքների և քաղաքական ուժերի նախընտրական գրասենյակների դիտարկման շրջանակներում առաքելության դիտորդներ այցելել են Աշտարակ քաղաքի Սիսակյան 1 հասցեում գտնվող «Հայաստան» դաշինքի գրասենյակ: Տեղում գրասենյակի աշխատակիցը, ով ներկայացել է որպես Կարեն Շահազիզյան, դրսևորել է ոչ կոռեկտ և ագրեսիվ վարքագիծ: Հատկանշական է, որ այցը և հանդիպումը գրասենյակի ներկայացուցիչների հետ նախապես պայմանավորված են եղել: Սակայն, երբ դիտորդները մտել են գրասենյակ, ընդունելությունը կրել է ընդգծված թշնամական բնույթ: Գրասենյակի աշխատակիցը, դիտորդներից պահանջել է փակել դուռը, որից հետո անմիջապես սկսել է բարձր ձայնով բղավել, հնչեցնել վիրավորական արտահայտություններ և թիրախավորել ինչպես ներկա դիտորդներին, այնպես էլ՝ առհասարակ դիտորդական առաքելությունների գործունեությունը: Նման վարքագիծն ուղղակիորեն խոչընդոտում է դիտորդական առաքելության իրականացմանը և հակասում է քաղաքական գործընթացներում ընդունված էթիկական նորմերին ու փոխադարձ հարգանքի սկզբունքներին:

Բացի այդ, տարբեր համայնքներում նախընտրական գրասենյակների դաշտային դիտարկման ժամանակ գրանցվել են մի շարք խոչընդոտներ: Մասնավորապես, «Ուժեղ Հայաստան» կուսակցության տարածքային գրասենյակների ներկայացուցիչները կտրականապես հրաժարվել են հաղորդակցվել դիտորդների հետ, չեն պատասխանել նրանց կողմից բարձրացված հարցերին: Ուշագրավ է, որ գրասենյակների աշխատակիցներն իրենց այս ոչ համագործակցային և մերժողական վարքագիծը միատեսակ ձևով պատճառաբանել են նրանով, որ իրենք դիտորդների հետ չշփվելու հստակ հրահանգ են ստացել իրենց իրավաբաններից:

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնադրվել է 2018թ. օգոստոսին: Նախաձեռնության անդամներն են «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը և Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը: Առաքելության նպատակն է նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը ՀՀ օրենսդրության և միջազգային չափանիշներին համապատասխան, ընտրական գործընթացների օրինավորությանը և դրանց նկատմամբ հանրային վերահսկողությանը:

ՀՀ ազգային ժողովի 2026 թ. ընտրությունների դիտորդական առաքելությունն իրականացվում է Եվրոպական միության, ԱՄՆ-ի գերմանական Մարշալ հիմնադրամի՝ Անդրատլանտյան հիմնադրամի (GMF TF), Նորվեգիայի դեսպանատան, Ժողովրդավարության ազգային հիմնադրամի, Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի և Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է «Ականատես» դիտորդական նախաձեռնությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի դրամաշնորհատուների տեսակետները: